ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՄԻՋԱԶԳԱՅՆԱՑՄԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

DOI: 10.52174/2579-2989_2024.3-65

Հիմնաբառեր. *միջազգայնացում, բուհ, կրթություն, համալսարանների վարկանշավորում*



Շուշան ՄՈՎՍԻՍՅԱՆ

ՀՊՏՀ «Ամբերդ» հետազոտական կենտրոնի փորձագետ

2014 թ. ավարտել է ՀՊՏՀ-ն և ընդունվել ասպիրանտուրա: 2016 թ. աշխատանքի է անցել ՀՊՏՀ «Ամբերդ» հետազոտական կենտրոնում՝ սկզբում որպես կրտսեր հետազոտող, իսկ 2018 թ.-ից առայսօր՝ որպես փորձագետ: Հեղինակ և համահեղինակ է 9 գիտական աշխատանքների:

https://orcid.org/0000-0001-7669-8626

Միջազգայնացումը որակյալ կրթության ապահովման հիմնական գործոններից է: Գլոբալացման և կրթական ծառայությունների մատուցման ոլորտում մրցակցության սրման պայմաններում միջազգայնացումը նպաստում է բուհերի գիտահետազոտական կարողությունների զարգացմանը, միջազգայնորեն մրցունակ կրթության ապահովմանը, համալսարանների եկամուտների բազմազանեցմանը, միջազգային ճանաչմանը և այլն: Ավանդաբար, որպես կրթական ծառայություններ արտահանողներ, հանդես են եկել զարգացած երկրները՝ ԱՄՆ, ԵՄ և այլն: Սակայն, վերջին տասնամյակներում աստիճանաբար կրթական ծառայություններ ներմուծողից արտահանողի են վերածվում զարգացող երկրները:

Հոդվածում վերլուծվել են ՀՀ բարձրագույն կրթության միջազգայնացման արդի վիճակը, հիմնական մարտահրավերները և հեռանկարները:

Գլոբալացման և երկրների միջև փոխկապվածության շարունակական աճի միտումները սրում են մրցակցությունը կյանքի բոլոր բնագավառներում: Այս առումով, բացառություն չէ նաև կրթության ոլորտը: Ժամանակակից պայմաններում, երբ վերանում են լեզվական խոչընդոտները, ընդլայնվում մարդկանց շարժի հնարավորությունները, ինչպես նաև լայնորեն կիրառության մեջ են դրվում տարբեր առցանց գործիքներ, որակյալ կրթություն ապահովելու համար անհրաժեշտություն է առաջանում մրցակցելու ոչ միայն տվյալ երկրի, այլև ամբողջ աշխարհի կրթական ինստիտուտների հետ: Գլոբալացումը, մրցակցությանը դիմակայելու մարտահրավերների հետ մեկտեղ, բուհերի համար նոր

հնարավորություններ է ստեղծում: Օտարերկրյա ուսանողների ներգրավումը, համատեղ հետազոտությունների իրականացումը և միջազգայնացման մյուս ուղղությունները բուհերի ֆինանսական հնարավորությունների ընդլայնման, օտարերկրյա փորձի տեղայնացման և որակյալ կրթության ապահովման աղբյուր են:

Արդեն 40 տարուց ավելի է՝ միջազգայնացման սահմանումը լայն քննարկումների առարկա է դարձել: Դա նոր հասկացություն չէ և երկար դարեր կիրառվել է քաղաքական գիտություններում ու հարաբերություններում, սակայն դրա օգտագործումը կրթական հատվածում տարածում է գտել 1980-ական թթ. սկզբին:

Որպես կրթական ծառայությունների մատակարարներ (արտահանողներ), ավանդաբար, հանդես են եկել զարգացած երկրները՝ ԱՄՆ, Եվրոպա, Ավստրալիա, իսկ որպես կրթական ծառայություններ ներմուծողներ՝ Աֆրիկայի, Ասիայի, Եվրոպայի որոշ երկրներ, այսինքն՝ այն տարածաշրջանները, որոնք ինքնուրույնաբար չէին կարող ապահովել պատշաճ մակարդակի կրթական ծառայությունների առաջարկ[1]: Թեև զարգացած երկրները շարունակում են մնալ որպես միջազգային ուսանողների ձգողության կենտրոններ, այնուամենայնիվ, վերջին տասնամյակներում զարգացող երկրներից շատերն աստիճանաբար կրթական ծառայություններ ներմուծողից վեր են ածվում արտահանողի: Օրինակ՝ Չինաստանն այսօր համարվում է միջազգային ուսանողներ ընդունող առաջատար երկրներից մեկը[2]:

Միջազգայնացումը, ըստ Ռոշկայի և Տրիֆոնովայի, կրթության և հետազոտությունների առևտրայնացման գործընթացն է, ինչպես նաև օտարերկրյա ուսանողների ներգրավման համար մրցակցությունը՝ եկամուտ ապահովելու և միջազգային վարկանիշ ձևավորելու նպատակով[3]: Տվյալ սահմանումը ենթադրում է, որ կրթության միջազգայնացման հիմնական նկատառումներն են եկամուտն առավելագույնի հասցնելը և միջազգային հեղինակություն/վարկանիշ ձեռք բերելը: Կրթության միջազգայնացումը, սակայն, շատ ավելի լայն հասկացություն է, քան շահույթի ստացման համար գործունեության ընդլայնումը: Նայթի սահմանմամբ՝ բուհերի միջազգայնացումը դասավանդման, գիտահետազոտական և ծառայությունների մատուցման գործառույթների ինտեգրումն է միջազգային, միջմշակութային համակարգին՝ կրթության որակի բարելավման նպատակով՝ ուսանողների, դասախոսների և ամբողջ հանրության համար[4]: Իսկ ազգային/ճյուղային/ինստիտուցիոնալ մակարդակում Նայթը միջազգայնացումը սահմանում է որպես բուհական կրթության *նպատակների, գործառույթների* կամ *ծառայությունների մատուցման* ինտեգրում միջազգային (միջմշակութային) համակարգում[5]: Կրթության միջազգայնացումն ազգային, ճյուղային և ինստիտուցիոնալ մակարդակում տեղի ունեցող գործընթաց է, որտեղ կրթական ծառայությունների մատուցման նպատակները, գործառույթներն ու կառուցակարգերը ձեռք են բերում միջազգային բնույթ[6]:

Բարձրագույն կրթության միջազգայնացման հիմնական ուղղություններն են՝

- *ուսանողներ.* օտարերկրյա ուսանողների ընդունելություն, ուսանողների փոխանակման ծրագրեր, արտասահմանում փորձառության և ամառային դպրոցների կազմակերպում,
- *պրոֆեսորադասախոսական կազմ.* հրավիրյալ դասախոսների մասնաբաժնի ավելացում, պրոֆեսորադասախո-

[1] Прохоров, А. В. (2012). Интернационализация высшего образования: состояние, проблемы, перспективы. Альманах теоретических и прикладных исследований рекламы, (2 (4)), 8-17.

[2] Li, J., & Eryong, X. (2022). New directions towards internationalization of higher education in China during post-COVID 19: A systematic literature review. Educational Philosophy and Theory, 54(6), 812–821. https://doi.org/10.1080/00131857.2021.1941866

[3] Roshka, P., & Trifonova, L. (2023). Internationalization And Academic Partnerships Between Universities. Sworld-Us Conference Proceedings, 1(usc20-01), 50–59. https://doi.org/10.30888/2709-2267.2023-20-01-008

[4] Zolfaghari A., Sabran M. Sh., Zolfaghari A, Internationalization of higher education: Challenges, strategies, policies and programs, US-China Education Review, May 2009, Volume 6, No.5, https://files.eric.ed.gov/fulltext/ED505713.pdf

[5] Knight J., Updating the Definition of Internationalization, https://goglobal.fiu.edu/_assets/docs/knight-2015-updated-definition-of-internationalization.pdf

[6] Утевская М.В., Интернационализация российского образования в современных условиях, 28.02.2023, https://roscongress.org/materials/internatsionalizatsiya-rossiyskogo-obrazovaniya-v-sovremennykh-usloviyakh-/

սական կազմի փոխանակման ծրագրեր, դասախոսների վերապատրաստում արտերկրում, միջազգային կոնֆերանսներին մասնակցություն,

- *գիտական համագործակցություն.* միջազգային գիտաժողովների, աշխատաժողովների կազմակերպում, համատեղ հետազոտությունների իրականացում, արտաքին դրամաշնորհների ներգրավում, միջազգային հրապարակումներ,
- *միջազգային համագործակցություն.* անդամակցություն միջազգային գիտակրթական կազմակերպություններին, համատեղ կրթական ծրագրերի մշակում, կրկնակի աստիճանաշնորհման կրթական ծրագրերի իրականացում, խորհրդատվական և տեղեկատվական ծառայություններ, բուհերի կառավարում և այլն:

Միջազգային համագործակցության նպատակներն են՝

- կրթության որակի բարելավումը,
- միջազգային կապերի ամրապնդումը,
- համալսարանի համաշխարհային տեսանելիության մակարդակի բարձրացումը,
- հետազոտական գործունեության զարգացումը,
- ռեսուրսային բազայի ընդլայնումը[7]:

Բուհերի միջազգայնացման մակարդակի գնահատման որոշակի գործիքակազմ առկա չէ: Սակայն, սովորաբար, որպես հիմք ընդունվում են հետևյալ ցուցանիշները՝ միջազգային ուսանողների մասնաբաժին, միջազգային անձնակազմի մասնաբաժին, միջազգային հրապարակումների մասնաբաժին և այլն: Հաճախ նաև որպես հիմք ընդունվում է բուհերի միջազգային վարկանիշը, քանի որ վերջինիս ձևավորման գործում մեծ կշիռ ունեն միջազգայնացման ցուցանիշները: Օրինակ՝ բուհերի վարկանշավորման ամենահեղինակավոր QS համակարգը կիրառում է 9 չափորոշիչ, որից 4-ն ուղղակիորեն վերաբերում է միջազգայնացմանը: Դրանք են՝ մեկ դասախոսի հաշվով մեջբերումների քանակ, արտասահմանյան դասախոսների մասնաբաժին դասախոսների ընդհանուր թվաքանակում, արտասահմանյան ուսանողների մասնաբաժին ուսանողների ընդհանուր թվաքանակում և միջազգային հետազոտական ցանցերում ներգրավվածության աստիճան: Միաժամանակ, դա չի նշանակում, որ մյուս չափորոշիչների գնահատման առումով, համալսարանի միջազգային համագործակցությունը դեր չի խաղում: Օրինակ, «ակադեմիական հեղինակություն» չափորոշչի՝ համալսարանի գնահատականի 15%-ը ձևավորվում է ներքին, 85%-ը՝ միջազգային ակադեմիական շրջանակի գնահատականների հիման վրա[8]:

ՀՀ կրթության մինչև 2030 թվականի զարգացման պետական ծրագիրն անբավարար է գնահատում ՀՀ բուհերի միջազ-

ԱՂՅՈՒՍԱԿ 1

Համալսարանների ընդհանուր վարկանշի գնահատման չափորոշիչները և դրանց կշիռները

	Ցուցանիշ	Կշիռը
1	Ակադեմիական հեղինակություն	30 %
2	Գործատուների շրջանում հեղինակություն	15 %
3	Դասախոս/ուսանող հարաբերակցություն	10%
4	Մեկ դասախոսի հաշվով մեջբերումների քանակ	20 %
5	Արտասահմանյան դասախոսների մասնաբաժինը	5%
6	Արտասահմանյան ուսանողների մասնաբաժինը	5%
7	Միջազգային հետազոտական ցանցեր	5%
8	Զբաղվածության/աշխատանքի ընդունման արդյունքներ	5%
9	Կայունություն	5%

[7] Roshka, P., & Trifonova, L. (2023). Internationalization and Academic Partnerships Between Universities. Sworld-Us Conference Proceedings, 1(usc20-01), 50–59. https://doi.org/10.30888/2709-2267.2023-20-01-008

[8] Աթոյան Վ., Մովսիսյան Շ., Թադևոսյան Ռ., Ինչպես բարելավել ՀՀ համալսարանների դիրքերը վարկանշավորման զեկույցներում, 2019, https://asue.am/upload/files/amberd_reports/finalranking.pdf

գայնացման մակարդակը[9]: Այսպիսի գնահատականը հիմնվում է, առաջին հերթին, համաշխարհային վարկանշային համակարգերում երկրի բուհերի ընդգրկվածության ցածր աստիճանի վրա: Բացի դրանից, ՀՀ բուհերը գրավիչ են միայն Մերձավոր Արևելքի և Ասիայի երկրների քաղաքացիների համար: Ծրագիրն անբավարար է գնահատում նաև օտար լեզուներով կրթական ծրագրերի թիվը, աշխատակազմի և ուսանողների միջազգային շարժունության մակարդակը:

Դիտարկենք ՀՀ բուհերի միջազգային վարկանիշը: «QS աշխարհի համալսարանների վարկանշավորում 2024» վարկանշային աղյուսակում ընդգրկված է ՀՀ ընդամենը մեկ բուհ՝ Երևանի պետական համալսարանը: Համեմատության համար նշենք, որ այս աղյուսակում ներառված է Վրաստանի 2, Ադրբեջանի 3 բուհ: Տվյալ համակարգը համալսարանները վարկանշավորում է նաև ըստ տարածաշրջանների: Եվրոպայի լավագույն համալսարանների վարկանշավորման համակարգում ընդգրկվել է հայաստանյան 3 բուհ՝ Երևանի պետական համալսարանը, Հայ-ռուսական (սլավոնական) համալսարանը և Հայաստանի ամերիկյան համալսարանը:

2022/2023 ուսումնական տարում ՀՀ ուսանողների ընդհանուր թիվը 71732 էր, որից 5586-ը կամ 7,8 %-ը՝ օտարերկրյա ուսանողներ[10]: Վերջիններիս մեծ մասը (60,9%) Հնդկաստանի և Ռուսաստանի քաղաքացիներ են[11]:

Նույնքան կարևորվում է գիտության միջազգայնացումը, որն արտացոլվում է միջազգային հեղինակավոր ամսագրերում հրապարակումներում: Դիտարկենք ՀՀ և հարևան երկրների գիտական հրապարակումների թվաքանակի շարժընթացը վերջին 20 տարիների ընթացքում: Ինչպես տեսնում ենք գծապատկեր 1-ից, սկսած 2014 թվականից, ՀՀ հրապարակումների թիվն աճել է ավելի դանդաղ տեմպերով, քան Վրաստանի ու Ադրբեջանի նույն ցուցանիշը, ինչով էլ պայմանավորված՝ ՀՀ-ն այսօր հետ է մնում հարևան երկրներից: Գիտական հրապարակումների քանակով բավական մեծ աճ է գրանցել Վրաստանը: Դա տեղի է ունեցել կրթության և գիտության ոլորտում պետական քաղաքականության փոփոխությունների արդյունքում: Կարևոր դեր է խաղացել վրացական գիտական կազմակերպությունների և համալսարանների հասանելիությունը Elsevier գիտական էլեկտրոնային բազային, որի շնորհիվ՝ ապահովվել է հասանելիություն ոչ միայն Scopus շտեմարանին, այլև հսկայական քանակությամբ գիտական աշխատանքների, գիտական տեղեկությունների փնտրման մի շարք այլ գործիքների, գիտական նախագծերի ֆինանսավորման հնարավորությունների: Այս առումով, հարկ է նշել, որ տվյալ շտեմարանին ՀՀ գիտական կազմակերպությունները չունեն հասանելիություն: Հայաստանյան հետազոտողներն աշխարհի գիտական նորույթներին հասանելիություն ստանում են հիմնականում Sci-Hub հարթակի միջոցով, որը թեև հնարավորություն է տալիս անվճար ձեռք բերելու հսկայական քանակությամբ գիտական աշխատություններ, այնուամենայնիվ, չունի փնտրման այն գործիքները, ինչ Elsevier-ը[12]:

2022 թ. վերջին ընդունվեց ՀՀ կրթության մինչև 2030 թվականի զարգացման պետական ծրագիրը, որի երեք հիմնական ուղղություններից մեկը կրթության միջազգայնացումն է: Ծրագիրը նպատակ ունի Հայաստանը դարձնելու կրթական ծառայություններ արտահանող երկիր, մասնավորապես՝ եվրասիական տարածաշրջանում կրթական ծառայություններ մատուցող տարածաշրջանային կենտրոն: Նախատեսվում է միջազգայնացման բոլոր ուղղությունների զարգացում՝ կրթական հաստատությունների կառավարման մոդելի բարելավում, բուհերի անձնակազմի վերապատրաստում, միջազգային գիտակրթական ցանցերում ներգրավում, միջազ-

[9] Հայաստանի Հանրապետության կրթության մինչև 2030 թվականի զարգացման պետական ծրագիրը, https://www.arlis.am/DocumentView.aspx?docID=175541

[10] Հայաստանի վիճակագրական տարեգիրք, 2023, https://armstat.am/file/doc/99541063.pdf

[11] Թորոսյան Ա., Հայաստանը՝ կրթական ծառայությունների միջազգային շուկայում. հնարավորություններ և մարտահրավերներ, «Ամբերդ» տեղեկագիր, 2024, DOI:10.52174/2579-2989_2024.2-52

[12] Մովսիսյան Շ., Հայաստանի գիտությունը՝ թվերով, «Ամբերդ» տեղեկագիր, 2022 (1), DOI: 10.52174/2579-2989_2022.1-46



ԳԾԱՊԱՏԿԵՐ 1

ԵԱՏՄ և այլ երկրների մասնաբաժինը Հայաստանի արտահանման և ներմուծման կառուցվածքում, %[13]

գային հրապարակումների և միջազգային ուսանողների թվի ավելացում, օտար լեզուներով կրթական ծրագրերի ապահովում և այլն: Ծրագիրը կյանքի կոչելու համար մշակվել է գործողությունների պլան: Բուհական համակարգում այս ծրագրով նախատեսվող ամենամեծ փոփոխությունը բուհերի թվի կրճատումն ու, այսպես կոչված, «ակադեմիական քաղաքի» ստեղծումն է[14]: Ակադեմիական քաղաքի ստեղծմամբ, լաբորատոր և այլ ենթակառուցվածքների բարելավմամբ ակնկալվում է, որ ստեղծվող 8 բուհից 4-ը 2030 թ. ընդգրկված կլինի աշխարհի համալսարանների վարկանշավորման հայտնի համակարգերում: Բուհերի միջազգայնացման մակարդակի բարձրացման համար, որպես առաջարկվող լուծումներ, նախանշվում են օտարերկրյա դիմորդներին ներկայացվող պահանջների և օրենսդրական դաշտի բարելավումը, տեղեկատվական հարթակի ձևավորումը, որակավորումների փոխճանաչման կառուցակարգերի բարելավումը և այլն: Գիտական բարեփոխումների հետ կապված՝ ծրագրվում է անցում կատարել գիտական միաստիճան համակարգի և համապատասխանեցնել գիտական աստիճանաշնորհման համակարգի չափանիշները միջազգային չափանիշներին: Այս փոփոխությունները գնահատելը բավական բարդ է, քանի որ, մեր կարծիքով, ծրագրում բացակայում է բարձրագույն կրթության խնդիրների, դրանց պատճառների և իրականացվող միջոցառումների միջև կապի քննարկումը: Մասնավորապես՝ այն, թե ինչպես է ենթակառուցվածքների բարելավումը, որը որակյալ կրթության ապահովման բազմաթիվ գործոններից մեկն է միայն, նպաստելու կրթության որակի բարձրացմանը կամ ինչպես են օրենսդրական բարեփոխումները և տեղեկատվության հասանելիության մեծացումը հանգեցնելու միջազգային ուսանողների թվի ավելացմանը:

Ամփոփելով նշենք, որ արդի պայմաններում մրցունակ կրթության ապահովման համար միջազգայնացման ուղով շարժվելը հրամայական է: ՀՀ բուհերի միջազգայնացման մակարդակը ցածր է, ինչի մասին վկայում է բուհերի ցածր միջազգային վարկանիշը: Միաժամանակ, կրթության ոլորտում իրականացվող միջոցառումները, ըստ էության, հնարավորություն չունեն լուծելու որակյալ կրթության ապահովման ու կրթության միջազգայնացման մակարդակի բարձրացման խնդիրները, քանի որ դրանք վեր չեն հանում կրթության և գիտության ոլորտում առկա խնդիրների խորքային պատճառները և առաջադրում արդյունավետ լուծումներ՝ դրանց համահունչ:

[13] Կազմվել է SCImago Journal & Country Rank տվյալների հիման վրա, մուտք՝ 5.03.2024 թ., https://www.scimagojr.com/countryrank.php?year=2004

[14] Հայաստանի Հանրապետության կրթության մինչև 2030 թվականի զարգացման պետական ծրագիրը: Հավելված 2, https://www.arlis.am/Annexes/6/2023_N351hav.2.pdf

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Աթոյան Վ., Մովսիսյան Շ., Թադևոսյան Ռ., Ինչպես բարելավել ՀՀ համալսարանների դիրքերը վարկանշավորման զեկույցներում, 2019, https://asue.am/upload/files/amberd_reports/final-ranking.pdf
2. Հայաստանի Հանրապետության կրթության մինչև 2030 թվականի զարգացման պետական ծրագիրը, https://www.arlis.am/DocumentView.aspx?docID=175541
3. Հայաստանի վիճակագրական տարեգիրք, 2023, https://armstat.am/file/doc/99541063.pdf
4. Մովսիսյան Շ., Հայաստանի գիտությունը՝ թվերով, «Ամբերդ» տեղեկագիր, 2022 (1), DOI: 10.52174/2579-2989_2022.1-46
5. Թորոսյան Ա., Հայաստանը՝ կրթական ծառայությունների միջազգային շուկայում. հնարավորություններ և մարտահրավերներ, «Ամբերդ» տեղեկագիր, 2024, DOI:10.52174/2579-2989_2024.2-52
6. Прохоров, А. В. (2012). Интернационализация высшего образования: состояние, проблемы, перспективы. Альманах теоретических и прикладных исследований рекламы, (2 (4)), 8-17.
7. Утевская М.В., Интернационализация российского образования в современных условиях, 28.02.2023, https://roscongress.org/materials/internatsionalizatsiya-rossiyskogo-obrazovaniya-v-sovremennykh-usloviyakh-/
8. Knight J., Updating the Definition of Internationalization, https://goglobal.fiu.edu/_assets/docs/knight-2015-updated-definition-of-internationalization.pdf
9. Li, J., & Eryong, X. (2022). New directions towards internationalization of higher education in China during post-COVID 19: A systematic literature review. Educational Philosophy and Theory, 54(6), 812–821. https://doi.org/10.1080/00131857.2021.1941866
10. Roshka, P., & Trifonova, L. (2023). Internationalization And Academic Partnerships Between Universities. Sworld-Us Conference Proceedings, 1(usc20-01), 50–59. https://doi.org/10.30888/2709-2267.2023-20-01-008
11. Zolfaghari A., Sabran M. Sh., Zolfaghari A, Internationalization of higher education: Challenges, strategies, policies and programs, US-China Education Review, May 2009, Volume 6, No.5, https://files.eric.ed.gov/fulltext/ED505713.pdf
12. https://www.scimagojr.com/countryrank.php?year=2004

Шушан МОВСИСЯН
Эксперт исследовательского центра «Амберд», АГЭУ

АРМЕНИЯ И МИР

ПРОБЛЕМЫ ИНТЕРНАЦИОНАЛИЗАЦИИ ВЫСШЕГО ОБРАЗОВАНИЯ АРМЕНИИ

В настоящее время интернационализация является одним из главных факторов обеспечения качества образования. Она способствует развитию научно-исследовательского потенциала университетов, обеспечению конкурентоспособного на международном уровне образования, диверсификации доходов университетов и международному признанию и т.д. Развивающиеся страны постепенно превращаются из импортеров в экспортеров образовательных услуг. В статье проанализировано текущее состояние интернационализации высшего образования РА, основные проблемы и перспективы.

Ключевые слова: *интернационализация, вуз, образование, рейтинг университетов*

Shushan MOVSISYAN
Expert at "Amberd" Research Center, ASUE

ARMENIA AND THE WORLD

CHALLENGES OF INTERNATIONALIZATION IN HIGHER EDUCATION OF ARMENIA

Currently, internationalization is one of the main factors in ensuring high quality education. It contributes to the development of scientific and research potential of universities, the provision of internationally competitive education, the diversification of HEIs' income and their international recognition. Developing countries are gradually transitioning from being importers to exporters of educational services. The paper analyzed the current state of internationalization in Armenia's higher education, highlighting its main challenges and prospect.

Keywords: *internationalization, HEI, education, ranking of universities*